Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
Ч-81

N 6952
30 MAY 2011

Մ. ԿՈՒԿԼԻՆ

ՈԶՆԻՆԵՐ



Թարգմ. օր. Մ. Ս.

ԹԻՖԼԻՍ
Կ. Մարտիրոսեանցի տպարան | Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1—2
1901

81.71-93
Ч-81
Ич

Մ. ԿՈՒԿԼԻԱՆՑ

Հ.Ս.Խ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Р.С.Ф.С.Р. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мравяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՈԶՆԻՆԵՐ



ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА

Թարգմ. օր. Մ. Ս.

ԹԻՖԼԻՍ

Կ. Մարտիրոսեանցի տպարան | Тип. К. Мартиросіанца
Орбеліановская ул., д. № 1—2
1901

29 MAY 2013

3919

Дозволено цензурою, въ Тифлисъ, 27-го Августа 1901 г.

Ա

Մարիամի տունը գտնուում էր մի գաւառական քաղաքի խուլ փողոցում։ Սա մի փոքր, հին տուն էր, ծռուած բարձր պատշգամբով։

Մարիամի ամուսինը սրանից հինգ տարի առաջ վախճանուել էր, թողնելով կնոջը կէս կենսաթոշակ և երկու երեխայ, որոնցից տղան - Ռուբէնիկը վեց տարեկան էր, իսկ աղջիկը — Լուսիկը մի տարով մեծ էր նրանից։ Մարիամն էլ մօտ երեսուն տարեկան էր, թէև արտաքինով աւելի հասակաւոր էր երևում։

Մայիս ամիսն էր, հիանալի եղանակ։ Առաւօտը տաք էր և պայծառ. օդը խաղաղ էր. այգում մի տերև անգամ չէր շարժուում. ճնճղուկները քիրազի թփի մէջ ճռւոլոում էին և ճիւղից ճիւղ թռչկոտում։ Բոլոր տների պատու-

հանները բաց էին։ Փողոցում անցնող կառքերի փոշի էր բարձրանում, որ կրկին ցած էր նստում։

Մարիամը դեռ սենեակներն էր մաքրում երբ երեխաները ուրախ դէմքով տուն վազեցին։

— Մայրի՛կ, մեզ համար ոգնի գնիր։

— Ի՞նչ ոգնի, ո՞ւրտեղ է։

— Այնտեղ, դուրսը, գիւղացին ծախում է։

— Հիմա էլ ոգնիներ հնարեցի՞ք։

— Շատ սիրուն են, մայրիկ, զամբիւղի մէջ են նստած. այնպէս փշո՞տ։

Մարիամը թէև ոգնու մասին յաճախ էր լսած բայց դեռ երբէք չէր տեսել, այդ պատճառով չէր կարող երևակայել, թէ դրանք ինչ տեսակ կենդանիներ են լինելու։ Նա իւր գործը թողել և երեխաների առաջնորդութեամբ դուրս եկաւ ետևի պատշգամբը։ Գիւղացին զամբիւղը ձեռին նստած էր սանդուղքի վրայ. երբ նա Մարիամին տեսաւ, կանգնեց ոտի և բթոցի եռեսի ծածկոցը վերցնելով ասաց.

— Առէք, տիկին։

Բթոցի յատակին ընկած էին մի մեծ և երկու փոքրիկ փշաւոր կենդանիներ, որոնք իրանց դնչիկները խրել էին խոտի մէջ, այնպէս որ ոչ գլխներն էր երևում, ոչ էլ ոտները. կարծես երեք հատ անշարժ գնդակներ լինէին։ Փոքրիկների մարմինը ծածուած էր բաւական երկար

սուր, դեղնադոյն փշերով, իսկ մէջտեղը թուխ-կարմիր. այն ինչ մեծ ոգնու մարմինը ծածկուած էր մոխրագոյն փշերով։

— Մայրն է և իւր երեխաները, ասաց գիւղացին, ոգնիները ցոյց տալով։

— Մարիամն ուզում էր նրանցից մէկին վերցնել գնելու համար, բայց սուր և պինդ ասելները ծակծըկեցին նրա մատները։

— Սրանց չի կարելի ձեռքով վերցնել, ծակծըկում են, ասաց գիւղացին ժպտալով։ Թաշկինակով կամ փեչով պէտք է վերցնէք։

— Գնի՛ր, մայրիկ, գնիր, խնդրում էին Ռուբէնիկը և Լուսիկը, տեսնելով որ մայրը կանգնած նայում է և առնելու դեռ վարանում։

— Ու՞ր պահենք, և ինչե՞րնիս է պէտք։

— Սրանք, տիկին, կատուից էլ լաւ են ոչնչացնում մկներ և ուտիճներ. վերջապէս երեխաների համար զբաղմունք կլինի։

— Քանիսո՞վ ես տալի, հարցրեց Մարիամը։

— Զնչին գնով, տիկին, որովհետև ժամանակ չունիմ սրանց ման ածելու։ Մի աբասի կըտա՞ս երեքին, փոքրերին հինգ-հինգ կոպէկ, իսկ մեծին տասը կոպէկ։

— Տասն և երկու կոպէկ կըտամ։

— Տասն և երկու կոպէկ քիչ կըլինի. ինքներդ դատեցէք, տիկին, տասը վերստ եմ ման ածել։

— Դէհ լաւ, տատնեէհինդ կոպէկ աւելի չեմ տայ։

— Համեցէք, թող ձեր ասածը լինի։ Եւ գիւղացին տուեց զամբիւղը։

Երեխաները անչափ ուրախ էին։

— Իսկ ի՞նչով պէտք է կերակրել սրանց, հարցրեց Մարիամը։

— Ինչո՞վ... սկզբում կաթ տուէք, մանաւանդ փոքրիկներին, իսկ յետոյ, երբ արդէն տեղին կըսովորեն, իրանք կըգտնեն իրանց ուտելիքը, մանաւանդ եթէ ձեր տանը միներ և միջատներ կան. ոզնին աչքաբաց կենդանի է։

Ռուբէնիկն ու Լուսիկը ոզնիները խոհանոց տարան, զամբիւղից հանեցին, նստացրին դետնին։ Ոզնիները մնացին այդպէս երկար անշարժ ու կծկուած։ Սակայն երբ երեխաները հեռացան և շուրջը լռութիւն տիրեց, ոզնիները քիչ-քիչ բացուեցին, վազելով մտան մութ անկիւնները և պահուեցին պահարանի ու վառարանի տակ։

Ռուբէնիկն ու Լուսիկը ամբողջ օրը սպասում էին, որ ոզնիները դուրս գան, բայց նրանք չերևացին, ոչ էլ նրանց ձէն ու ձուն էր լսւում. մինչև անգամ իսկի չմոտեցան իրանց համար դրած կաթով ամանին, այնպէս որ երեխաները սկսեցին անհանգստանալ, թէ արդեօք նրանք մի կերպ չեն փախել, կամ գուցէ քաղցից սատկել են իրանց թագուտի տեղերում։

Օրը աննկատելի կերպով երեկոյացաւ։ Արևը աղուց արդէն պահուել էր հորիզոնի ետև, երջալոյսն էլ արևմտեան։ Մարիամի բնակարանում, մանաւանդ խոհանոցում, արդէն մութ էր, էև. կարելի էր միջի առարկաները իրարից անտարանել։ Ամբողջ տանը մեռելային լռութիւն էր տիրում։ Հանդարտ էր և փողոցում։ Ռուբէնիկն ու Լուսիկը նստած էին խոհանոցում,



երբ ոզնիներից մէկը յանկարծ դուրս եկաց սենեակի մէջ տեղը և իւր սուր դունչը դուրս ու այն կողմ շրջելով՝ նկատեց երեխաներին ու իսկոյն նորից ծլկեց մութ անկիւնը։ Դրանից յետոյ միւս ոզնին դուրս վազեց մի ուրիշ անկիւնից, շտապ և հաւասարաչափ թըրտոցով. վառարանի տակից էլ ծուռց էր լսւում, բայց այնտեղ պահուած ոզնին չերևաց... Երեխաներն անչափ ուրախացան, որ իրանց ոզնիները կենդանի են, և անհոգ գնացին քնելու

Բ

Հետևեալ օրը ամպոտ էր ու մանր անձրև էր մաղում: Թէև այդպիսի եղանակին մարդ աւելի երկար է քնում, բայց մեր երեխաները սովորականից էլ շուտ զարթնեցին և նրանց առաջին միտքը ոչնիներն եղաւ: Շտապով հագնուեցին և վազեցին խոհանոց, ուր նրանք ամենից առաջ ինչ-որ անախորժ ու ծանր հոտ զգացին. դա ոչնիների հոտն էր, որով գիշերը լցուել էր սենեակը: Սակայն երեխաները ընաւ ուշադրութիւն չդարձրին այդ հոտին, նրանց խելք ու միտքը իրանց սիրելի ոչնիների հետ էր, որոնցից մէկը այդ միջոցին սենեակի մէջ տեղ էր նստել, իսկ միւս երկուսը դունչը դնչի տուած ինչ-որ խժռում էին սեղանի տակ: Կաթի ամանը չուռ էր տուած, իսկ նրա մօտ երևում էին նրանց ոտների թաց հետքերը. յատակի վրայ

տեղ-տեղ երևում էին ուտիճների թևեր ու ճուաներ. ինչպէս երևում էր, մեր ոչնիները գիշերը տեր էին դարձել խոհանոցին և իրանք իրանց կարգադրութիւններ արել: Թէև Ռուբէնիկն ու Լուսիկը կամացուկ ներս մտան, բայց ոչնիներն իսկոյն դէս ու դէն փախան և մութ անկիւններում պահուեցին: Ասում են որ նրանք հոտառութեամբ են իմանում մարդու և ուրիշ կենդանիների մօտենալը: Բրէմի ասելով՝ նրանց մէջ այդ զգայարանքը աւելի է զարգացած, քան միւսները. թէև նրանց լսողութիւնը նոյնպէս լաւ է: Ոչնիները շուտով դուրս եկան իրանց ապաստարաններից և սկսեցին այս ու այն կողմ վազվզել, կարծես մի բան էին որոնում. ինչպէս երևում էր՝ գիշերը լաւ ընտելացել էին իրանց նոր բնակատեղին: Եւ առհասարակ պէտք է նկատել, որ ոչնիները թէև ի բնէ երկչոտ են և մարդուց փախչող, բայց միևնոյն ժամանակ շուտ են ընտելանում և հեշտութեամբ ընտանի դառնում: Լուսիկն ու Ռուբէնիկը այս բանում բոլորովին համոզուեցին: Հազիւ երկու շաբաթ էր անցել, որ ոչնիները, առանց քաշուելու երեխաներից, անվախ ու համարձակ վազվզում էին խոհանոցում, նրանց աչքի առաջ ուտում և երբեմն մինչև անգամ մօտենում էին նրանց: Սակայն երբ երեխաներն ուզում էին նրանց վերցնեն, կամ միայն ձեռք

դիպցնեն, ոզնիները իսկոյն կծիկ էին դառնում, այնպէս որ էլ չէր նկատւում, թէ որտեղ է գտնւում նրանց գլուխը և որտեղ նրանց ոտները. շուրջը միայն սուր փշերն էին բիզ-բիզ կանգնում: Եւ ինչքան շուռ ու մուռ էին տալիս, նրանք դարձեալ չէին բացւում:

Ռուբէնիկն ու Լուսիկը շատ էին հետաքրքրւում թէ ինչպէս են նրանք բացւում, բայց մինչև այժմ ոչ մի կերպ չէին կարողացել դեռ նկատել: Այս անգամ վճռեցին անպատճառ տեսնել. վերցրին մի կծկուած ոզնի, դրին սեղանի վրայ, իրանք էլ մօտը նստեցին և սպասում էին նրա բացուելուն: Սպասում էին առանց ձայն հանելու, առանց մի թեթև շարժման և աչքը չէին հեռացնում ոզնուց: Երեխաները այսպէս մի կէս ժամի չափ մնացին:

Նրանց համբերութիւնն արդէն հատել էր, երբ վերջապէս նկատեցին, որ ոզնու սուր փշերը սկսեցին մի տեսակ ցնցուել: Այնուհետև ոզնին շուտով սկսեց իւր փշոտ պատեանի առջևի և ետևի մասը դանդաղ կերպով բանալ, որ մինչև հիմա ծածկում էր նրա կուրծքն ու գլուխը: Նախ երևացին նրա հինգ մատանի, փոքրիկ եղունգներով կարճլիկ ոտները, որոնց նա զգուշութեամբ դնում էր սեղանի վրայ, որպէս զի պատրաստ լինի փախչելու. յետոյ երևաց նրա մեծ բերնով և խոզի դնչի նման սուր,

փոքրիկ դնչիկը: Գլխի կաշին դեռ ևս կնճռոտած էր. փոքրիկ, ուրախ, սև աչիկները ծածկուած էին խիտ ու դէպի ներքև կախուած թնքերով: Վերջապէս գլխի կաշու ծալքերն էլ արթուեցին և երեխաները տեսան ոզնու դընչիկը, որի վրայ միքանի հատ սև ու հաստ մազեր կային: Աչքերի ետևը մի-մի սպիտակ բիծ ունէր, իսկ նրանց մօտ լայն-լայն ականջներ: Երեխաները լաւ զննեցին ոզնու վիզն ու ուսերը, որոնք ծածկուած էին ոչ թէ թշնամու համար անմերձենալի այդ բնական զէնքով, այլ ինքն՝ փշիկներով, այլ փափուկ ու չիկագոյն մազով: Հէնց այդ է պատճառը, որ ոզնին վտանգի ժամանակ շուտով կծկւում է, որպէսզի ծածկի իւր մարմնի անպաշտպան մասերը: Ոզնին բացուելուն պէս՝ ուզում էր փախչել, այլ երբ սեղանի ափին հասաւ, վախեցած յետ քաշուեց, կուչ եկաւ և պատրաստւում էր կծկուելու. սակայն տեսնելով որ իրան վտանգ չէ սպասում, սկսեց հանգիստ մնալ դալ սեղանի վրայ, այս ու այն կողմ հոտոտելով և, ինչպէս երևում էր, փախչելու համար ճանապարհ էր ուզում: Վերջը նրանք իմացան, որ եթէ ծխատոտի ծուխը փչեն ոզնու քթի կամ նրա փերի մէջ՝ նա իսկոյն բացւում է: Նոյնպէս եթէ նրան ջուր լցնես, կամ ջուրը գցես, դարձեալ նա ստիպուած է լինում բացուելու: Այդ մի-

ջոցով շատ անգամ օգտուում են չները, մանաւանդ խորամանկ աղուէսը։ Նա իւր թաթերով գնդակի պէս գլորում, տանում է կծկուած ողնուն և հասնելով ջրի փսին կամ որևէ գետակի՝ գցում մէջը։ Ոչնչին իրան ջրի մէջ զգալով՝ բացւում է խեղոյն, որպէսզի մի կերպ դուրս գայ ջրից. բայց խորամանկ գազանը վրայ է ընկնում, խլում դնչից և թշուառ կենդանու միայն փշոտ մորթն է թողնում։ Ողնուն այնպէս լաւ են պահպանում նրան ծածկող ամուր փշիկները, որ եթէ նա ջրից չվախենար և իւր թշնամիներն գլուխ դրած մի ջոցներից կարողանար խոյս տալ, նա անմատչելի կըլիներ բոլոր գիշատիչ կենդանիներին։ Այժմ նրանք երկու թշնամի ունին, այն է՝ բռէճն ու արծիւը, որոնց երկար ու սուր-սուր ճանկերի համար ոչինչ բան է ողնու կարճ փշիկները։

Մառն անցաւ. եկաւ աշունը։ Ցերեկներն ամպոտ և անձրևային. խակ գիշերները երկար ու խաւար էին. առուտները սառը հեղեամ էր հոսում։ Քամին աղմկով փչում էր տերևները ալգիների ու բանջարանոցների ծառերից, և սանում դէպի փողոցները, երբեմն պտուտ ածելով, երբեմն էլ ալեշով մոլթերն ու ցանկապատերի տակը։ Ամենքն իրանց տան պատուհանները ամուր փակել էին, սենեակները տաքացնում և երեկոները շուտ վառում ճրագները։ Մարիամի խոհանոցի պատուհաններն էլ փակուեցին, որով ողնիների հոտ, աւելի ծանր և խեղդիչ դարձաւ. ուստի սակպուած եղան նրանց ազատութիւն տալու, մանաւանդ որ երեխաները առաջուայ նման էլ չէին զբաղւում և հետաքրքրւում նրանցով։

Մի առաւօտ ողնիներին դուրս բերին ա
գին և բաց թողեցին քիրպի թփի տակ։ Ա
ամբողջ օրը ողնիները պահում էին ծառերի
թափուած տերևների տակ և չորացած ու կի
սափուտ ճիւղերի մէջ։ Քամին ոռնում ապվկու
էր այդում, թփերի բները շարժում, նրա ճկու
ոստերը կռացնում և վրան մնացած տերևներ
ցած թափում։ Անձրևի կաթիլները անցնելու
տերևների միջից՝ մի-մի անգամ ընկնում էին
ողնիների վրայ, որից նրանք աւելի խորն էին
թաղւում տերևների կոյտի մէջ։ Լուսիկն ու
Ռուբէնիկը միքանի անգամ վազեցին այդին
տեսնելու, թէ ինչ եղան իրանց ողնիները, բայց
ոչ մի կերպ նրանց գտնել չկարողանալով՝ հա-
մոզուեցին, որ ողնիները փախել են այդուց։

Երբ մութն ընկաւ, քամին փոքր ինչ հանդար-
տուեց, իսկ անձրևը դեռ էլի կաթկթում էր։
Խեղճ ողնիները ամբողջ օրը անօթի էին մնա-
ցել. այժմ վերջապէս թոթափելով իրանց ծած-
կող տերևները՝ դուրս եկան ուտելիք գտնելու։
Նրանք մտնում ու դուրս էին գալիս թփերի
տակերը, հոտոտում էին ճանապարհին պատա-
հած բաները։

Զնայելով որ աշունն արդէն սկսուել էր,
ողնիները թառամած խոտերի վրայ էլի գտ-
նում էին թռչկոտող ճպուռներ, որոնք ամառ-
ւայ հանդարտ երեկոներին անհոգ բարձրաձայն

երգում էին իրանց ուրախ երգերը. պատա-
հում էին նոյնպէս ճռճռան ծղրիտների, որոնք
ճանճրացնում էին իրանց միակերպ երգով։ Ողնի-
ների կերակուր էին դառնում և զանազան քլէգ-
ներն ու մժեղները, որոնք դուրս էին եկած
իրանց մութ բներից. ողնիները չէին ղղում և
նրանց թրթուրներից ու միւս ամեն տեսակ մի-
ջատներից, որոնք մեծ վնաս են տալիս այգի-
ներին ու բանջարանոցներին. իսկ անձրևային
որդերն ու օրօճները նրանց համեղ պատառներն
էին։ Ողնիները յարձակւում էին գետնի վրայ
գիշերող փոքրիկ թռչնակների վրայ. ուտում
էին ծառերից թափուած պտուղները։ Առհասա-
րակ նրանք բաւական ուտելիք էին գտնում
Մարիամի այգում։ Գիշերը այդու այս կամ այն
կողմը շարունակ լսելի էր լինում ողնիների ա-
ղաղ վազվզոցից առաջացած խշխշոցը։ Լուսա-
դէմին, երբ առարկաները սկսեցին պարզ նկա-
տուել, նրանք կրկին մտան թփերի տակ տե-
ղևների կոյտի մէջ։

Այսպէս ողնիներն անց էին կացնում իրանց
օրերը. երեկոները նրանք դուրս էին գալիս
ուտելիք փնտռելու, իսկ ցերեկները պահ-
ւում։

Ցրտերն ընկան. առաւօտեան եղեամը սպի-
տակին էր տալիս խոտերի ու տանիքների վրայ։
Այգում ու բանջարանոցում ցրտից հողին էր

կպել ամբողջ բուսականութիւնը, իսկ ծառերից թփերը մերկացել կանգնել էին:

Մրսում էին և մեր խեղճ ոզնիները. նրանցից ամեն մէկը սկսեց իւր համար առանձին որջ շինել ցախերի մէջ, հողարջի խիտ թփերի տակ: Հողի մէջ շինած փոքրիկ փոսը որջի տեղ էր ծառայում, որը փափկացնելու համար տերևներ, յարդ ու մամուռ էին հաւաքում մէջը: Հետաքրքիր էր տեսնել, թէ ինչպէս ոզնիները որջեր շինելիս կարողանում էին իրանց փշիկ-

ից օգտուել: Որտեղ չոր տերևներ էին տեսնում, թաւալւում էին վրան, և յայտնի բան է տերևներից շատերը ցցւում էին նրանց փշերի մէջ և այդ ծիծաղաշարժ բեռնով քարշած՝ ոզնիները դնում էին իրանց որջերը: Նրանք դէն ձևով կրում էին և ծառերից թափուած տերևները:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Գ

Ձմեռը խիստ երկար տևեց, բու
բորան արաւ ամեն տեղ. բ
մեր ոգնիները ձիւնի հիւսեր
ծածկուած՝ առանց զարթն
լու խոր քնած էին իրանց բն
բում. նրանք ոչ ցուրտ էին զգո
ոչ ձմռան տխուր ոռնալը։ Վերջապէս քիչ-քիչ
բուը սկսեց երկիրը տաքացնել և նրա տ
ճառագայթները սկսեցին հետզհետէ ձիւնապա
լեռներից ու բլրակներից արագավազ առուն
վազեցնել։

Հեռաւոր երկրներից չուող թռչունն
սկսեցին վերադառնալ և աւետել գարնան մ
տենալը։ Արևը աւելի պայծառ ու սիրալ
էր փայլում։ Ահա՛ անտառներում և այգին
բում ծառերի վրայ կանաչ բողբոջներ սկս
ցին երևալ. իսկ ձիւնէ վերմակից նոր ա
զատուած հողի վրայ՝ թարմ խոտի ծիլեր։ Կեչ

անիները ու միջատները զարթեցին ձմեռուայ
մրութիւնից և իրանց քներից դուրս եկան,
տեղ պահուել էին ձմեռուայ ցրտից ազա-
ուելու համար։ Զարթեցին և մեր ոգնիները
բանց երկար քնից և չոր տերևները խշրտա-
նելով՝ գնացին հողարջի և մորիի խիտ թփերի
էջ մտնելու։ Այսպիսով ուրախ գարնան հետ
ուկին սկսուեց և ոգնիների հանգիստ, աշխա-
ատանքով ու հոգսերով լի կեանքը, որ քիչ օգուտ
էր բերում մարդկանց։

Մարիամի երեխաները չատ անգամ էին
այգի վազում. ծաղկող խնձորենու և հոտաւէտ
երազէ թփերի վրայ զուարճանալու համար,
այց ոգնիներին դեռ չէին պատահել և նրանց
հետքով էլ չէր անցնում, թէ ոգնիները կարող
էին այնտեղ լինել։

Գարունը սկսուելուն պէս՝ ոգնիների առա-
ին հոգսը եղաւ իրանց ապագայ ձագուկների
համար փափուկ և որքան կարելի է յարմար
տեղ պատրաստել։ Ձագուկները լինում են թուով
երեքից մինչև վեց։ Նոր ծնուած ոգնիները լոյս
աշխարհ են գալիս սպիտակ և համարեա մերկ
մաշկով ծածկուած, իսկ փշիկները յետոյ են
դուրս գալիս։ Ի՜նչպէս քնքշութեամբ են վերա-
բերուում ծնողները իրանց ձագուկներին, ո՞րքան
հոգս են տանում, մինչև որ նրանք մեծանան
և կարող լինեն իրանց համար հարկաւոր

ուտելիք գտնել և օդտաւէտ աշխատաւ
դառնան: Պակաս յուզմունք և չարչարանք չ
քաշում ողնիները իրանց ձագուկներին թշնա
մու յարձակումներից պաշտպանելու համար:

Գարունը վերջանում էր: Այգում բոլ
ծառերը կանաչել էին. արդէն չորացած հո
վրայ խոտերի մէջ տեղ-տեղ երևում էին դալ
նան ծաղիկները:

Ձագուկները մեծանում և ամրանում էի
օրէօր աշխոյժ և կայտառ դառնում. նրան
մերկ կաշու վրայ արդէն նկատելի էր նո
դուրս եկող սուր փշիկները:

Տաք ու հանդարտ գիշեր էր: Ձագուկներ
դուրս եկան իրանց փափուկ բնից և ճանա
պարհին դէս ու դէն հոտոտելով ուղևորուեցա
դէպի ցանկապատը, որ բաժանում էր Մարիա
մի այգին մի դատարկ տեղից: Նրանց հանդէս
գալարուելով սողում էր օձը. նա տեսնելով այ
համեղ պատառը՝ բաց արեց իւր թունաւոր
բերանը, որ կուլ տայ փոքրիկ ողնուն. բայց
մայրը չուտով օգնութեան հասաւ, կանգնեց իւ
ձագուկի առաջ և փշերը բիզ-բիզ եղած՝ սպա
սում էր յարձակուելուն: Օձը կռացաւ, խայ
թեց ողնուն և ֆշշալով ետ քաշուեց: Բայց քաջ
պաշտպանը անվախ առաջ գնաց, մօտեցաւ և
սկսեց հոտոտել իւր զայրացած թշնամուն: Օձը
կրկին անգամ խայթեց ողնու դունչը և արիւնեց:

Այն ժամանակ երկու հակառակորդները
վրայ ընկան. օձը խայթում էր նրա
դունչն ու բերանը, բայց ինքն էլ ծակոտւում
էր ողնու սուր փշիկներով: Ձագերի մայրը ոռ
նում էր, վերջապէս յարմար բոպէ գտնելով՝
գլխից բռնեց, ջարդ ու փշուր արաւ և յետոյ
սկսեց հանգիստ անուշ անել: Օձի թունաւոր

ատամներն ու թունաբեր խուլը ոչ մի վնաս չէ-
տալիս նրան, ինչպէս չվնասեցին և կռուի
ժամանակ ստացած վէրքերը: Ասում են՝ որ
ողնիները առանց վնասուելու կարող են ուտել
մինչև անգամ խարանաճճիները, որոնց ուտելը
մահ է պատճառում:

Ե

Այն տարին ամառը տաք էր, բայց յաճախ անձրևներից բուսական խոնաւ։ Այդ պատճառով այգիներում և բանջարանոցներում երևացել էին բազմաթիւ որդեր, զանազան միջատներ և ուրիշ կենդանիներ, որոնք ոչնչացնում էին համարեա բոլոր բոյսերը։ Ամեն տեղ դանգատնել ու տրտունջներ էին լսւում։ Անվնաս էին մնացել միայն Մարիամի այգին ու բանջարանոցը։ Ոգնիները նրա այգում ապրելով՝ ագահութեամբ ոչնչացնում էին վնասակար միջատները և այդպիսով պահպանում այգին ու բանջարանոցը։ Ոգնիների շնորհիւ հարևան այգիներն ու բանջարանոցներն էլ ուրիշներից պակաս վնաս կրեցին։

Սակայն, չնայելով այն տհաճին օգտին, որ ոգնիները տալիս են բուսականութեան, մարդիկ իրանց տգիտութեամբ արհամարանքով են

վերաբերում դէպի ոգնիները, հալածում են նրանց և առանց որևէ պատճառի սպանում։

Այդպիսի վիճակի ենթարկուեցան և մեր հերոսները չարաճճի երեխաների ձեռքով։

Ամառը վերջանալու վրայ էր։ Օրերը կարճացան, իսկ գիշերները աւելի մթնեցին ու ցրտեցին։ Այգիներում մրգերը հասան։

Մի անգամ, երբ Լուսիկն ու Ռուբէնիկը խաղում էին գաւթում, յանկարծ մի ինչ-որ աղմուկի ձայն լսեցին այգուց. վազեցին դէպի այն կողմը և նրանց աչքերին հետևեալ տեսարան ներկայացաւ։— Հարևանների միքանի չարաճճի երեխաները, երկար մահակներով զինուած՝ վազում էին քերազէ թփերի մօտ։ Լուսիկն ու Ռուբէնիկն էլ կամեցան իմանալ թէ բանն ինչումն է, մօտեցան վազողներին ու հարցրին.

—Ո՞ւմն էք որոնում այստեղ։

—Փշաւոր մեծ մկներ ենք սպանում, պատասխանեց խմբից մէկը։ Տե՛ս մէկին արդէն սպանել ենք այնտեղ։ Այս ասելով նա ձեռքը մեկնեց դէպի ցանկապատը, որտեղ կանգնած էին երկու փոքրիկ աղջիկ և գետնի վրայ ինչ-որ բան էին զննում։

Լուսիկն ու Ռուբէնիկն էլ մօտեցան նրանց և իսկոյն ճանաչեցին սպանուած կենդանուն, որ ոչ թէ մուկ, այլ իրանց խոհանոցում ապրող ոգնիներից մէկն էր։

563

— Սպանեցի՞նք, սրան էլ սպանեցինք, ու բախ աղաղակեցին տղաքը, և մէկը վայտ բարձրացնելով արիւնաշաղախ ոգնուն, տարա ու միւսի մօտ դրեց։

— Ինչո՞ւ սպանեցի՛ք, հարցրեց Լուսիկ խղճալով։

— Ինչպէ՛ս թէ ինչու, չէ՞որ դրանք պիղծ են

— Բայց սրանք մկնե՛ր չեն, ոգնինե՛ր են։

— Միևնոյն է, դրանք էլ պիղծ են, և նա ոտով խփեց սպանուած ոգնուն։

Այսպէս մեր երկու հերոսները տգիտութեան գոհ դարձան. իսկ թէ ի՞նչ եղաւ երրորդը, կամ կենդանի մնացի՞ն նրանց ձագուկները, որոնց մասին այնքան հոգս էին քաշում ծնողները, ճշմարիտ չեմ կարող ասել։

ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА СССР
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Պետական Գրադարան
7/XI—1922
Имени А. Масиманян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0383736

3919